

ԱՍՏՈՒԾՈՅ ԵՐԳԸ

Տիեզերքին համայն ափին բռնած,
Բարբառեցաւ Սէրը այսպէս.
— Ես եմ Ոգին համատարած,
Ես եմ հրնուանք, արեւ ու կեանք:
Առանց ինծի լոյսն է խաւար,
Աստղ ու ծաղիկ՝
Աչքեր մարած:
Ես եմ երգին մեղրը պայծառ
Եւ գինիին բոցը զըւարթ,
Գարուններուն համբոյրը ջերմ,
Նայուածքներուն նետը հրեղէն:
Ալիքներուն կու տամ իդոն
Եւ կարօտին՝ քեւեր հրգոր,
Հովին՝ սարսուռ, ծովին՝ երգեր,
Արշալոյսին՝ գոյնի ծիծաղ:
Սուգը կ'օծեմ խինդի շողով.
Եւ վերքերու վըրայ կ'իջնեմ
Զանգակներու որպէս դօղանք:
Ալիքըսըսով տեմպոսներուն,
Մայրական ջերմ գիրկի նըման,
Նաւահանգիստ կ'ըլլամ անդորր:
Ինծմէ կ'առնեն ամպերը շանք,
Հըրաբուխներն՝ երկունք ու կիրք
Եւ ձրմեռներն՝ ըսպիտակ երգ:
Սրտիս բոցէն կը մանանչէ
Օրօրոցի մէջէն ծաքող
Ժրպիտը վառ,
Եւ մայրական աչքէն կաքող
Գուրը նեկտար:
Ես լիաբուռն կը սրբըսկեմ,
Արտերու մէջ ցորեններուն,
Սընունդ բերկրանք,
Ժրպիտներու անձրեւ առատ,
Լոյսէ փրփուր եւ շամանդաղ,
Փուռէն ելլող հացերուն՝ բոյր,
Եւ կաղնուրուող հիւանդներուն՝
Այտներուն քոյր:
Ես կը վառեմ,
Բանտերու մէջ մուրը ծակող,
Յոյսի մանանչ,
Եւ քրտնաքոր մակատներուն՝
Բոց ու փայլակ:
Խաղաղութեանս ովկէանոսէն
Յորդ կը բըխին

Փեքակներու բորբ մեղեդին,
Փողոցներէն անցնող կարկաչն,
Զրվէժներուն ծափի շառաչ,
Հարսնիքներուն ծիծաղն արծաթ:
Համբոյրիս տակ կը բողբոջի
Կեանքը անհուն ծաղիկներով
Եւ միքգերով մեղրածորան:
Նայուածքիս տակ
Դըժոխքը սեւ ատելութեան
Կ'ըլլայ խնկոյթ, երգահանդէս:
Խրար սեղմող եղբայրական
Զեռքերը տաք,
Ինծմով կ'ըլլան շղթայ մ'անմալ:
Ես եմ, ես եմ խաղաղութեան
Վառ ծիծաղն հագարեբանգ,
Ես՝ կեանքի ջահ,
Եւ պայծառ ակ երջանկութեան,
Տիեզերքին սիրտը շարժող,
Ես եմ Աստուած
Յաւերժաշող:

Հ. ԵՓՐԵՄ ՏԵՐ ՂԱԶԱՐԵԱՆ

☆

ՀԵՐՈՍՄԱՄԱՐՏ

Այս չորրորդ անգամն է
բայց վերջինը՝
ինկաւ
միւսներուն վրայ
մայրամուտին առաջին ժամուս:
Կարմիր հեղուկը կը փակչի
ձեռքներուն,
կը փակչի տաք՝
պաղ մատներուն:
Ոչ հայր
ոչ մայր
ոչ եղբայր
չունի ոչինչ մտածման:
Թո՛ղ դառնայ
հայրենիքին
հողը բերրի
արիւնով:

ԱՌԱՆ ԳԱՍՊԱՐԵԱՆ

• ԳՐԱԽՈՍԱԿԱՆ •

ՅՈՒՑԱԿ ԶԵՌԱԳՐԱՅ ՄԱՇՏՈՅԻ ԱՆՈՒԱՆ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ. հատոր Ա.: Կազմե-
ցին՝ Օ. Եգանեան, Ա. Զէյրունեան,
Փ. Անրաբեան: Ներածութիւնը՝ Օ. Ե-
գանեանի: Խմբագրութեամբ՝ Լ. Խա-
չիկեանի, Ա. Մնացականեանի: Տպ. Ե-
րևան, ՀՍՍՌ ԳԱ Հրատ. 1965, սիւնակ
1634, մեծադիր, տպագրանակ 1000,
դրնը 6 ռուբլի:

Երկար ժամանակէ ի վեր սպասուած
հատոր մը, բաղմամեայ աշխատանքի եւ
համադրածակից ոյժերու պտուղ, զոր ա-
հա Երևանի Մատենադարանը՝ արդար
հպարտութեամբ՝ կը ներկայացնէ բանա-
սէր հայ հասարակութեան: Մաշտոցի ան-
ուան Մատենադարանի առաջին հինգ
հազար ձեռագիրներու համառօտ եւ ամ-
փոփ ցուցակն է այս ստուար հատորը, որ
հրապարակ կու դառնայ ցուցակագրական
սկզբունքներու որոշ նորութիւններով եւ
կատարելութիւններով, նկատմամբ՝ մի-
աձեւութեան, հարցակարգի դասաւոր-
ման, նկարագրութեան եղանակի, ձեռա-
գրական խորագիրներու բանաձեւումին,
կրճատումներուն եւ յապաւումներուն,
նոյնիսկ կետագրական մանրամասնու-
թիւններուն: Եւ այս բոլորը՝ սեղմ ծա-
ւալի մէջ շատ տեղեկութիւններ տալու
նպատակով:

Ներածականէն կը տեղեկանանք թէ այս
հատորին կազմութեան՝ իրենց բաղմա-
մեայ օժանդակութիւնը եւ հմտութիւնը
ընձեռող աշխատակիցները շատ աւելի
են՝ քան ինչքան նշանակուած է ճակա-
տին վրայ. արդարեւ քարտադրանք, հա-
մեմատական տախտակներ, «Թեմատիկ»
ցուցակներ պատրաստող Ժրջան մասնա-
գէտներու թիւը կ'անցնի քսանը:

Մենք սրտադին կը շնորհաւորենք զի-
րենք բոլոր, նաեւ անոնք՝ որոնց անուն-
ները անյայտ կը մնան մեզի, այն զգա-
ցումով՝ թէ այսպիսի պատկանելի գործի
մը զիմաց, շնորհակալութեան արժանի

են նոյնիսկ անոնք որ կատարած են ան-
հատում փորձերու սրբադրութեան տա-
ժանագին աշխատանքը:

Անշուշտ հատորը, իր 1634 սիւնակնե-
րով, չէր կրնար սպառիչ զոհացում տալ
մատենադատական բոլոր հարցերուն, ինչ-
պէս համեստօրէն կը յայտարարեն հրա-
տարակիչները: Այդ արդէն մասամբ կը
լրացնեն Գարեգին Կթղ. Յովսէփեանցի,
Աշոտ Գ. Արրահամեանի, Լեւոն Խաչի-
կեանի եւ Յակոբ Անասեանի հմտալից
աշխատութիւնները: Կը խոստացուի նա-
եւ՝ մօտ ապագային հրատարակել մաս-
նագիտական ցուցակներ:

Հատորին սկիզբը, Օ. Եգանեան, 100
էջնոց բնագրածակ ներածականով մը (սիւն
13-214), կու տայ ամբողջ պատմութիւնը
Մատենադարանի ձեռագրական հաւաքա-
ծոյի ստեղծման եւ յաջորդական զար-
գացման, մանրամասնօրէն ներկայացնե-
լով այն բոլոր աղբիւրները՝ որոնցմէ դո-
յացած է այս հսկայ հաւաքածոն:

Եւ ահա, մեր առջեւէն կը տողանցեն,
հանդիսաւոր չքերթով, հին ու նոր վաս-
տակաւորները բոլոր, ցուցակագիրներ,
գրագրաւորապետներ, հաւաքողներ, նը-
ւերատուներ, նորոգողներ, ընդօրինա-
կողներ. եւ հոսկ, լիով կը դժագրուի
վերջին քառասնամեակի չրջանին կատար-
ուած մեթոտիկ աշխատանքները: Յան-
կեր ու ցուցակներ մէկը միւսին կը յա-
ջորդեն, անհատում թիւերու եւ թուա-
կաններու առընթեր, յստակօրէն ու լրիւ
ներկայացնելու համար այդ բոլորը:

Կարեւոր խոստում մըն ալ հոս, թէ եր-
կորդ հատորին վերջաւորութեան՝ պի-
տի տրուին զանազան ցանկեր, հին ու
նոր համարագրութեան, ինչպէս նաեւ
նախապէս տպուած ցուցակներու եւ ներ-
կայ ցուցակի վերջնական համարագրու-
թեան համեմատական տախտակները:

Էջմիածնի վանքի գրադարանի հին հա-
ւաքածոն (1441-1862) հիմը կը կազմէ,
իր 2377 ձեռագիրներով, Մատենադարա-
նի ներկայ հարստութեան: Ասոր վրայ
բարդուած է Էջմիածնի Գէորգեան հաւա-
քածոն (1866-1910) իր 1371 ձեռագիրնե-

բով: Ասոնց վրայ կու գան աւելնալ էջ-միածնի 1910-1915 թուականներու հաւաքածոն՝ 915 ձեռագիրներով, Վասպուրականի 1915ի հաւաքածոն՝ 1496 ձեռագիրներով, Տարօնի 1916 ի ժողովածոն՝ 155 ձեռագիրներով: Այս բոլորը արդէն չուրջ 6-500 միաւորի պատկառելի գանձարան մը կը կազմէին, Հայաստանի մէջ խորհրդային իշխանութիւններու հաստատման նախօրեակին: Յաջորդական նոր հաւաքումներով՝ տարուէ տարի ձոխացած է հաւաքածոն. 1921ին կ'արձանագրէ 6-576 ձեռագիր, 1925ին՝ 6-790 միաւոր, 1931ին՝ 7-010 միաւոր, 1936ին՝ 7-466 միաւոր, 1940ին՝ 7-793 միաւոր, և հուսկ 1962ի Դեկտեմբեր 31ին՝ 13-398 ձեռագիր, որոնցմէ 10-171 հայերէն, 995 արարատառ, 90 օտարալեզու, մնացածը հմայիլներ ու պատառիկներ:

Հատորը թէեւ չոր ներկայացումն է 5-000 ձեռագիրներու նկարագրութեան եւ բովանդակութեան, թիւերով ու համառօտագրութիւններով խճողուն, սակայն մեր երեւակայութիւնը թափ կ'առնէ, եւ այդ տասնեակ հազարաւոր թիւերուն վերայէն ուստիստելով՝ մեզ կը տանի հայրենի աշխարհին հնամենի վանքերը, կ'անցնինք գաւառէ գաւառ, լեռնէ լեռ, ու յանկարծ մեր դիմացը կը գտնենք զբոսէր վանահաններ, մազադաթեայ պատկառելի հատորներու առջեւ կրած, հիանալի մանրանկարներու զիմաց ծնրազիր. ու դարերուն ընդմէջէն, դէմ առ դէմ կը կանգնինք մեր գանձերուն, որոնք հպարտութիւն կ'ազդեն մեր վրայ: Բայց աւագ. հինգերորդէն տասներորդ դար մեզի ոչինչ չէ հասեր. մեր զբականութեան կէսը եւ աւելին, ուրեմն, կորսուել է, թալանուել, այրուել:

Ձեռագրական այս հսկայ հաւաքածոն ալ, ուրիշներու նման, իր հնագոյն գանձերը կը հանէ թ. դարէն. երկու ճառքնաւոր (թթ. 985 և 1001): Ասոնց քով կը կանգնին վեց ձեռագիր՝ Ժ. դարէն, երեքը Աւետարան: Եւ յաջորդաբար, 14 ձեռագիր՝ ԺԱ. դարէն, 41 հատ՝ ԺԲ. դարէն, 218 ձեռագիր՝ ԺԳ. դարէն, 430 միա-

ւոր՝ ԺԴ. դարէն: Ապա դարերուն հետ քալելով, կը գտնենք չուրջ 600 ձեռագիր՝ ԺԵ. դարէն, չուրջ 450՝ ԺԶ. դարէն, չուրջ 1-700 ձեռագիր ԺԷ. դարէն, հուսկ 1-100ի չափ ալ ԺԸ. դարէն:

Մատենադարանը որդեգրած է 1800ական թուականներէն ալ ձեռագիրներ, չուրջ 500 հատ, եւ նոյնիսկ քսաներորդ դարէն՝ 4 հատ: Մեր համեստ կարծիքով, ԺԹ. դարու ձեռագիրներէն արժէք կրնան ներկայացնել միայն անոնք՝ որ նորութիւն մը կը բերեն մեր մատենագրական ժառանգութեան վրայ. այլապէս, անոնք պարզ կրկնութիւններ են եւ կամ դիւանային նիւթեր:

Մեր կարծիքով, առ հասարակ չափազանց համառօտ նշանակուած են ձեռագիրներու բովանդակութիւնները. չեն նշանակուած, մանաւանդ ժողովածուներու եւ ճառքնաւորներու մէջ (որոնք 2000 հատը կ'անցնին), զանազան երկերու համապատասխան թերթահամարները. ինչ որ կրնար մեծապէս օգտակար ըլլալ արտասահմանեան բանասէրներու համեմատական պրպտումներուն համար:

Հաւաքածոյին մէջ, մասնաւոր արժէք կը ներկայացնեն՝ մեծ հեղինակներու ինքնագիրները, ինչպէս Գրիգոր Տաթևացիի (թ. 1115, 1659, 2382, 3616), Առաքել Սիւնեցիի (թ. 2522), Գրիգոր Սյրիսցիի (թ. 1573), Եսայի Նչեցիի (թթ. 437, 1422), Յովհաննէս Երզնկացիի (թթ. 59, 206, 2520, 2549):

Բացառիկ արժէք կը ներկայացնէ Եղնիկի «Եղծ աղանդոց»ի միակ օրինակը, աշխարհի վրայ, ԺԳ. դարէն (թ. 1097):

Հատորին կցուած են վեց տեսակ ցանկեր (սիւն 1337-1630). Ժամանակագրական, նախադադարաւ եւ հետագայ յիշատակարաններու, նիւթերու, պատառիկ-պահպանակներու, տեղանուններու, անձնանուններու:

Հոս ալ, սակայն, եթէ ներելի է, փոքրիկ նկատողութիւն մը պիտի ուղէինք կատարել՝ ի նպատակ այս ցուցակներու անդրադոյն կատարելագործման, կամ աւելի ճիշտ՝ դիւրամատչելիութեան: Տանք

պարագայ մը. ենթադրենք թէ կը փրկուեմ Յովհաննէս Երզնկացիի «Մեկնութիւն Մատթէի» (Շնորհալիէն սկսած):

Կը բանամ իսկոյն Յովհաննէս Երզնկացի անձնանունը. քովը զրուած կը գտնեմ Պլուզ, Ծործորեցի, ԺԳ-ԺԴ դդ. շուրջ 1250-1326, գրիչ եւ մատենագիր: Եւ ապա չոր ցանկ մը՝ 200է աւելի ձեռագրական թուահամարներու. հարկ է որ մէկիկ մէկիկ բազմաթիւ մեծ ցուցակի ներկարագրութեանց մէջ, ուղածիս հասնելու համար:

Նոյնն է պարագան՝ երբ, օրինակի համար, կը փնտռեմ Գրիգոր Տաթևացիի «Գիրք Հարցմանց» երկին ձեռագիրները, կամ Շնորհալիի «Յիսուս Որդի»ի ԺԳ. դարու ձեռագիրներ: Այս անձնանուններուն զիմաց՝ սիւնակներով թուահամարներ միայն չարուած են:

Կը համարեմ թէ ցուցակը շատ աւելի դործնական պիտի ըլլար՝ եթէ այդ անձնանուններու ցանկին մէջ, դոնէ մեծածուկն ենթադրութեան համար, ստեղծուէին ենթադրութեան համար, ստեղծուէին ենթադրութեան համար, երկերու խորագիրներով, ինչպէս Տաթևացիի տիպար ցուցակին մէջ, որպէսզի կարելի ըլլար դիւրութեամբ գտնել փնտռուածը:

Իսկ նկատմամբ Յովհաննէս Երզնկացիի, կ'ուղէինք անդրադարձնել՝ որ տասնեակ մը տարիներէ ի վեր, բանասիրութեան մէջ կը դանդաղենք Յովհաննէս Երզնկացի-Պլուզ եւ Յովհաննէս Երզնկացի-Ծործորեցի երկու տարբեր մատենագիրներ, մինչեւ վերջերս նոյնացած:

Վերջին նկատողութիւն մըն ալ. 1959ին լոյս տեսած է Պրոֆ. Աշոտ Գ. Արրահամանի «Մատենագրարանի ձեռագիր գանձար» օգտաշատ հատորը, ուր կարգ մը արժէքաւոր ձեռագիրներու մասին՝ բաւական լայն տեղեկութիւններ կան, ժողովրդականացնելու նպատակով: Նկատեցինք, սակայն, որ ներկայ ցուցակին ձեռագրական թուահամարները յաճախ չեն համապատասխաներ Ա. Գ. Արրահամանի ներկայացուցած թուահամարներուն: Քանի մը օրինակներ:

Ա. Գ. Արր. հնագոյն թղթեայ ձեռա-

գիրը կը ներկայացնէ թ. 2678 (հին թրւահամար 102), զրուած 971ին (անդ, էջ 29): Ներկայ ցուցակին մէջ՝ թիւ 2678 ձեռագիրը ԺԵ. դարու ժողովածու մըն է:

Ա. Գ. Արր. Աղաթանգեղոսի հնագոյն ձեռագիրը կը գնէ թ. 912ը (թ. 48բ-167բ), զրուած 1220ին, Մխիթար գրչի ընդօրինակութիւն (անդ, էջ 34-35): Ներկայ ցուցակին մէջ, այդ թիւը կրող ձեռագիրը՝ ԺԸ. դարէն է, Աղաթանգեղոս չի պարունակեր, զրիչը՝ Ստեփանոս:

Ա. Գ. Արր. Կորիւնի հնագոյն ձեռագիրներ կը ներկայացնէ թթ. 3787 և 3797, կը գնէ նաեւ համապատասխան թերթահամարները (անդ, էջ 35): Ներկայ ցուցակին մէջ այս թիւերով առաջինը ճառքնաւոր մըն է, երկրորդը՝ Վարք Սրբոց: Կորիւնի մասին խօսք չկայ:

Այս չնչին նկատողութիւններով հանդերձ, որոնք ամենեւին չեն նուաստացնիր այս մեծղի դործը, մենք անդամ մը եւս կը դնահատենք տարուած հսկայ աշխատանքը եւ խորունկ յարգանքով կը նայինք անոր. կը փափաքինք ալ աւելի կատարեալ տեսնել զայն. եւ որուն ի սէր՝ պէտք չէ որ թուղթի եւ մամուլի սահմանադրութեամբ կամ խնայողութիւն կատարուի: Անշուշտ մեզի չ'իյնար խորհրդային պատկան իշխանութիւններու զիմէլ, այս հարցի կապակցութեամբ: Միայն կը փափաքինք նշել որ այսպիսի աշխատութիւն մը, պահանջուած կատարելութիւններով, պատուարեալ կոթողային դործ մըն է, համայն աշխարհի մատենագիտական շրջանակներու առջեւ:

Հսկայական Արարատին զիմաց, կանդնած է հիմա մշակոյթի նոր Արարատը, Մատենադարանը, իր 14-000 ձեռագիրներով. եւ այս ցուցակը սահմանուած է ըլլալու անոր ոսկեղէն բանալին:

Անդամ մըն ալ կը շնորհաւորենք, սրբաւորին, Մաշտոցի անուան Մատենադարանի Վարչութիւնը իր բոլոր աշխատակիցներով, եւ անյապաղ կը սպասենք երկրորդ հատորին:

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԵՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ